

zu Tenues und von Mediae asp. zu Medien¹¹. Grammont vergißt MSL, XX, 230, anzugeben, ob er sich die Substrattheorie auch für das Phrygische als anwendbar vorstellt: m. E. scheidet sie daran, daß wir notwendigerweise annehmen müssen, daß die Verschiebung der Mediae und Mediae asp. zuerst begonnen habe.

OTTO HAAS

ԱԿՕՒՉ — ԱՆՍԱՄ ANSAM

Die bisherigen Erklärungsversuche enthalten alle etwas Richtiges: sie erklären m. E. (insbesondere Kretschmer, KZ, 33, 563 f.) die einzelsprachliche Bedeutungsentwicklung des Wortes, die durch Synonyma (namentlich *κλύω*) beeinflusst ist (s. weiter unten). Zu einer befriedigenden Deutung des Wortes nach seinem Ursprung kommen sie aber nicht (vgl. Boisacq, Prellwitz, s. v.), weil sie alle ein Etymon suchen, das an sich schon eine Beziehung zum „Gehör“ enthält. Nun wird aber gerade eine solche Beziehung durch den griechischen Gebrauch durchaus nicht gefordert: im Gegensatz zu den das „Hören“ von vornherein bezeichnenden Verben *ἀίω*, *ἀκροάομαι* haben ja gerade nur *κλύω* und *ἀκούω* die Bedeutung eines Passivs zu *λέγω* „genannt werden, als etwas gelten“ angenommen¹. Da nun aber dieser Gebrauch bei *κλύω* offensichtlich auf die Nebenbedeutung seines Wurzelements *śravas* — *κλύος* usf., nämlich „Ruhm, Leumund“, zurückgeht und eine ähnliche Bedeutung für das Etymon von *ἀκούω* nicht zu vermuten ist, war eben *ἀκούω* ursprünglich nicht ein Wort für „Hören“.

Wir haben nun ein schönes Beispiel für die Bedeutungsentwicklung eines Wortes für „Hören“ in französ. „entendre“, aus lat. „in-

¹¹ Der Nachweis, daß der Wandel von *bh* > *b* im Phrygischen erst nach der Einwanderung in Kleinasien stattfand, liegt in dem Worte „Phryger“: Die Griechen entlehnten es noch in der Form mit erhaltenem *bh* (= gr. *φ*), es wurde erst nachher zu „Boiyec“. Βροκεί(-ω) = phrygi(-ō) (?) steht in Inschrift 31.

¹ Die Bedeutungsverhältnisse behandelt Prévot, L'expression en grec ancien de la notion „entendre“ in Revue des études grecques, Bd. XLVIII (1935), S. 70 ff.

tendere“, und *ἀκούω* stellt m. E. einen ganz ähnlichen Fall dar, wie durch die Formen *ἀκούω* neben *αχεύει* (kyprisch nach Hesych, vgl. Boisacq, ferner Kretschmer, a. a. O.) nahegelegt wird: nach dem Verhältnis von *ὀρούω* : *ὀρέομαι* : *ῥνομι* = *ὄρνυμι* stellt sich das Griechische klar als **ῥκου* (-*sj*-?) -*ō*, **ῥκευ*-*ō* zu ai. *asnomi* „erreichen“ (*ῥkneυ*-*mi*).

Die Bedeutung ist genau mit dem angeführten romanischen Falle zu vergleichen.

Im einzelnen verweise ich auf die im Rigveda häufige Verbindung von *asnomi* mit *stoman* „Lieder, Gebete“, die den Gott erreichen sollen.

Im Griechischen spricht bekanntlich zunächst die Glossierung *ἀχεύει* · *τηρεῖ* für eine ursprüngliche weitere Bedeutung des Wortes (auch das späte *ὠτακουστέω*?).

Zu vermuten wäre auch, daß das homerische *δαίτης ἀκουάζομαι* noch Spuren einer den Griechen nicht mehr geläufigen Bedeutung „Teilnehmen, Erlangen“ zeige.

Ein weiteres Problem ist ferner, wieso gerade bei *ἀκούω* die so bedeutende Konstruktion *καχὸς ἀκούω* u. a. durchgedrungen ist: daß dies unter dem Einfluß von *κλύω* geschah, ist mir sehr wahrscheinlich. Aber sollte man nicht als Grundlage eine der Bedeutungen von *asnomi* „in einen Zustand gelangen“ (*amrtatvam asnomi* usf.) vermuten?

Zum Formellen wäre noch zu bemerken, daß allenfalls eine Desiderativbildung auf *-sjo* vorliegen könnte. Auch die Form *ἀκήχοα* könnte sich als ererbt erweisen, da sie unverkennbare Ähnlichkeit mit dem ai.-Desiderativ *asiši-ša-* aufweist (avesta *asašuta*, vgl. Charpentier, Desiderativbildung, Uppsala 1912, S. 22²).

Der schlagende Beweis für diese Etymologie liegt m. E. in armenisch *անսամ ansam* „hören, anhören, erhören, gehorchen“ usw., das zweifellos mit der gleichen Bedeutungsentwicklung wie griechisch *ἀκούω* zur Wurzel *ῥk-* gehört: Hübschmann stellte S. 464 zweifelnd arm. *հասանեմ hasanem* „komme an“ zu ai. *asnomi*. Wie er selbst sieht, ist ein Lautwandel von **ῥk-* zu *as-* nicht wahrscheinlich: das *n* wäre nur zwischen Vokal

² Dieselbe Wurzel liegt wohl auch in *ἀροος* „Arznei“ als „Eingegebenes“, vgl. deutsch „Gift“, und seinen Ableitungen vor.

und ursprünglichem *s* geschwunden (Meillet führt S. 39 die Beispiele *ուս us* „Schulter“ aus **omso-*, vgl. ai. *ámsah*, got. *ams*, und *ամիս amis* „Monat“, vgl. *mensis*, an).

Dieser Fall ist also ein neues und ziemlich bedeutsames Beispiel für ein dem Armenischen und Griechischen (Meillet, S. 142) gemeinsames lexikalisches Element. Da aber die Form *անսամ ansam* von der griechischen *ἀκούω*, *αχεύει* der Bildung nach recht stark verschieden ist, spricht die gemeinsame Bedeutung besonders deutlich dafür, daß die Übereinstimmung zwischen Griechisch und Armenisch schon auf eine Nachbarschaft in einer der ältesten Perioden der indogermanischen Sprachgemeinschaft zurückgeht.

Otto Haas.

ԲԱԳՐԱՏՈՒՆԵՆԵՑ ԿՐՔԱՅԵՆԿԱՆ ՀԵՐՕՏՈՒԹԻՒՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՈՒՐ

Վրաստան՝ իր քաղաքական կեանքի նախապայմաններն առանդական եւ ապա պատմական առաջին հաղարամեայ շրջանում, ընդհանրապէս թոյլ իշխանութիւն է ունենցած, յաճախ ենթարկուելով դրացի հզօր պետութիւններին, որոնց մէջ երբեմն նաեւ Հայաստանին: Բաղրատունեաց տոհմն է հեղած, որ այս երկրի դանադան անշատ մասերը եւ իրար դէմ կռուող տեղական «աղաւոր»ները միացնելով եւ խաղաղեցնելով, Վրաստանում կենտրոնական իշխանութիւն է հաստատել, կարգ ու կանոն ներմուծել, եւ նոյն իսկ երկրի սահմաններն ընդարձակել: Նոյն իսկ երկրի սահմաններն ընդարձակել է նա այս կերպով նոր, երկրորդ հաղարամեայ շրջան է սկսել, որ հանդամանքների բերամբ շրջան է իր ելեւէջներն բայց կարողացել է ունենցել է իր ելեւէջներն բայց կարողացել է իր գոյութիւնը պահպանել, մինչեւ ԺԸ. դարի վերջը:

Եթէ չհաշուենք առանդական շրջանի (Գ. դար Ն. Ք.) Փառնուաղ Ա.ին, որի վրայ ընդարձակօրէն խօսած ենք¹, Վրաստան՝ իր քաղաքական առաջին շրջանում, այն է մինչեւ Բաղրատունեաց հարստութեան տիրապետութիւնը, միայն մի իսկական անկախ պետութիւնը, միայն մի իսկական անկախ պետ է ունենցած, Վախթանգ Գորգալան թագաւորը², որ թէեւ առապելախոն, բայց

¹ Վրաստան եւ Հայերը: Ա. հատոր, էջ 121:
² Անդ, էջ 158 եւ շար.:

իրապէս հինն է դրած Հայաստանի եւ Վրաստանի մէջ կրօնական, քաղաքական եւ մշակութային սերտ յարաբերութիւնների եւ համերաշխ գործունէութեան, երբ երկու երկրներն էլ բուռն ճիւղ էին գործ դնում, իրենց նոր կրօնը, քրիստոնէութիւնը պահպանելու:

2. դարում Պարսկաստանի եւ Բիւզանդիայի մէջ կոիւնքը տեղափոխուել էին Արեւմտեան Վրաստան, մինչեւ որ 562ին Յուստինիանոս կայսրը խաղաղութիւն կնքեց Խոսրով արքայի հետ, եւ այս դաճաղբութեան հիման վրայ, Հայաստանի նման Վրաստանն էլ ունեցաւ իր պարսկական եւ յուստինյան «քաժիմները»: Արեւմտեան Վրաստանը, որի համար իսկապէս կուռն էին յոյները, մնաց Բիւզանդիայի քաղաքական ազդեցութեան տակ իսկ Արեւելեան Վրաստանը Պարսկաստանի գերիշխանութեան տակ անցաւ:

3. դարում ինչպէս Հայաստան, նոյնպէս եւ Վրաստան խղճալի վիճակի մէջ էին: Սաւրակինոսները կրօնական մոլեռանդութիւնից մղուած, այլախրօն երկիրներն էին արշաւում, բռնի կերպով Մահմէտականութիւնը տարածելու նպատակով: Նրանք անցել էին Պարսկաստան, Հայաստան, Վրաստան եւ հասել մինչեւ Կովկասեան լեռները, ամէն տեղ սրով եւ հրով իրենց նպատակն իրագործելով: Հայոց նման վրացիք եւս հաղարանելով կեանք զոհ են տուած այս բռնապետական արշաւանքին, որ դադար է առած միայն այն ժամանակ երբ Բիւզանդիոնի ուժեղանալով արար խալիֆները որոշ ընդլիմութիւն դտան իրենց դէմ: Այս կերպով սրանց տիրապետութիւնը տկարանալով, աւերման ենթարկուած երկիրներում ազգային կեանքը նորից կենդանութիւն ստացաւ: Այս ժամանակ է, որ Բաղրատունեաց տոհմը, Վրաստանում եւս, տեղական ժողովրդեան խնդրանօք, իշխանութիւն է հաստատում, սկսելով Տայք-Կղարջից:

Բաղրատունեաց տոհմի ծագման եւ սկզբնական գործունէութեան մասին հայ եւ վրացի պատմական աղբիւրները տարբերում են միմիանցից:

«Վրաստանի Տարեղիբը»³ մի ընդարձակ Գլխում պատմում է «Մեր վրացի քաղաւոր Բաղրատունիների կեանքն ու վարքը, թէ ո՞րտեղից եկան նրանք եւ ե՞րբ սկսան թագաւորել»: Այնտեղ Բաղրատունեաց ցե-

³ Անդ, Գլուխ Գ.:

դազրութիւնը սկսում է Ազամից եւ հասնում է աստիճանաբար մինչեւ Դաւիթ Մարգարէ եւ Սողոմոն իմաստուն: Ապա՝ յաջորդների մի երկար շարք դասաւորելուց յետոյ յիշատակում է մի նոր Սողոմոն, «որին, ասուած է այնտեղ, Աստուած շնորհեց 7 դաւակ: Սրանց 4ը եկան Վրաստան, իսկ միւս 3ը բնակեցան Հայոց աշխարհի Եկեցի գաւառում⁴, ուր Ռափայել թագուհին նրանց քրիստոնէայ է մկրտել եւ անուանել է Մուշեղ, Բագրատ եւ Արզաւար (Արզար): Թագուհին այս երեքից մէկին փեսայացնում է իրեն, իսկ միւս երկուքը ազգական են դառնում Հայոց թագաւորներին»:

Ո՞վ էր այս «Ռափայել» թագուհին, յայտնի չէ: Պատմութեան անծաօթ է մնացած նա: Այս առասպելախառն աւանդութիւնը շարունակուած է այսպէս: Վրաստան եկող միւս 4 եղբայրներից մէկը՝ Գուրամ կամ Գուարամ՝ Սոսորովեան հարստութեան արքայ Միհրդատի քրոջ հետ ամուսնանալով նրանից մի գաւակ է ունեցել, որի անունը դրել է Բագրատ: Սրա որդին նոյնպէս Գուրամ է կոչուել: Այս երկրորդ Գուրամի ժամանակ վրացիք՝ յոյն-պարսկական կռիւններից օգտուելով թօթափում են իրանց վրայ տիրող պարսկական գերիշխանութիւնը: Եւ որովհետեւ վրացի «Նախարարներն» եւս, հայկականների նման, միմիանց հետ շատ հաշտ չէին ապրում, ուստի փոխանակ իրանց փոխադարձ հաւանութեամբ, մէկին արքայ նշանակելու, լաւագոյն են համարում Բիւզանդիոնի կայսեր ղեկմելու եւ նրանից խնդրելու: Կայսրը ընդունում է միջամտել եւ յիշեալ Գուրամ կամ Գուարամին ընտրում է Վրաստանի իշխան, Կիւրապաղատի տիրոջ սով: Ըստ Վախուշթի, ահա այս Գուրամի հօր, Բագրատի անունով, այնուհետեւ նրա զարմը Բագրատիոնի է կոչուել: Գուրամ Բ. իշխել է Վրաստանի վրայ 575—600 (Յ. Ք.):

Այս է վրացական աւանդութիւնը. Բրոսէ իր «Վրաստանի Պատմութեան» վերջին Գլուխներում ընդարձակօրէն քննում է այս աւանդութիւնն եւ հետեւեալ եզրակացութեան է հասնում.

⁴ Այս «Եկեցի» անուշտ Հայաստանի Եկեղեցի գաւառն է, թէեւ Brosset իր Վրաստանի Պատմութեան մէջ «Եկեցի» բառը մերձեցնում է նաեւ Սիւնիքի Եղիզիկ կամ Եղեղնաձոր գաւառին: Վախուշթ իր վրացական Աշխարհագրութեան մէջ յիշատակում է Եկեցիք՝ մերձեցնելով Վրաստանի «Եկեցի-Մզալի» (չուր) գետակի կողման:

«Ա. Բագրատունիների ծագման մասին վերոյիշեալ վրացական աւանդութիւնը քայլ հիմն ունի:

Բ. Այս խնդրում հայկական աւանդութիւնն աւելի հաւանական է:

Գ. Հայաստանի, Վրաստանի եւ Ափխազեայի Բագրատունիները մերձաւոր ազգականական կապ ունէին իրար հետ⁵:

Յառաջ բերենք մի աւելի վստահելի վրացի ազբիւր որ իրողութիւնը տարբեր եւ աւելի ճշգրտէն է ներկայացնում: Վրացի հնագէտ ուսումնականը, Ե. Թաղայշվիլի 1912ին հրատարակել է վրացերէն հին ձեռագիրների կարեւոր մի ժողովածոյ, որոնց մէջ եղել է մէկն, որ կրում էր «Համառօտ Տեղեկութիւն Վրաստանի Պատմութեան վրայ» վերնագիրը: Վերլուծելով այս «Համառօտ Պատմութիւնը» Թաղայշվիլի գրում է. «Ծանօթ փաստ է, որ «Սմբատի⁶ պատմութիւնն» եւ Վախիթանդի Տարեգիրքը (Գարթլիս Յիսովրէրա) պատմում են որ Բագրատիոնիների զարմը սկսել է Գուարամ Կիւրապաղատով (579—600). բայց այս միշտ չէ: Մենք ունինք պատմական ամենահին աղբիւրներ, ինչպիսի են «Վրաստանի Գարձը» եւ Մարիամ թագուհու անունը կրող «Վրաստանի ժամանակագրութիւնը», որոնց անձանօք են թէ այդ Գուարամն եւ թէ նրան յաջորդողներն իբրեւ Բագրատիոն»: Վրացական աւանդութիւնը պարզապէս կամեցել է իշխող Բագրատիոնիների վարկը բարձրացնել, նրանց սերումը տանելով մինչեւ Դաւիթ մարգարէն...:

Այս նոր վրացական պատմութիւնն որոշակի հաստատում է, որ Բագրատիոնիները Վրաստանում սկսել են իշխել Ազամնասէի (Ատրնեբէ) որդի Աշոտ Բագրատունիից, Վրաց Բրոնիկոնի 13րդ տարին, որ հանդիպում է 779ին (Յ. Ք.):

Աշոտի այս բազմաբղիւն ձեռնարկն հետեւեալ կերպով է պատմուած:

Մրուան Բ. արարական Սալիֆը Աշոտին կարգել Վրաստանի կուսակալ: Երբ արարացիք սկսան նրա վրայ բռնանալ, Աշոտ որոշում է նրանցից ազատուելու համար յունական իշխանութեան ներքեւ անցնիլ եւ այս նպատակով մեկնում է Վրաստանից, իր հետ առնելով իր ընտանիքն, որոնց մէջ էին իր

⁵ Brosset, Histoire de la Géorgie. Additions et Eclaircissements, St. Petersburg 1896.
⁶ Սմբատի (Դաւիթաձէի) մասին տես «Վրաստան եւ Հայերը», Ա. հատոր, էջ 89:

երկու որդիքն, Ազամնասէ եւ Բագրատ: Նրանք եկել են նախ Ջաւախք (Ջալախէթի՝ ըստ Վրաց), ուր արարացիք յարձակուել են նրանց վրայ. բայց Աշոտ յաջող կերպով զիմադրել է եւ ղեկմել է զէպի Տայք, եւ այնտեղից անցել է Շալչէթի ձորը եւ ապա Կղարջը: Այս կողմերի ժողովուրդը, որ արարացիների արշաւանքի ժամանակ ձորերում եւ սարերում էր ապաստան որոնել, Բագրատունի իշխանի գալը իմանալով, դուրս է եկել նրան ընդ առաջ եւ խնդրել, որ փոխանակ Յունաց երկիրը տեղափոխուելու, մնայ այնտեղ եւ իշխէ իրենց վրայ: Աշոտ կ'ընդունէ ժողովրդի խնդիրքն եւ մնում է Տայքում: «Աստուած, ասում է վրացի պատմաբանը, նրան յաջողութիւն շնորհեց: Նա դարձաւ Կղարջի եւ Շալչէթի տէրը եւ աւերուած գեղերը վերականգնեց»:

Աշոտ իր աթոռատեղին հաստատեց Արտանուշում: Կղարջի անտառներում նա գտել էր մի հսկայական բարձրութեամբ եւ լայն տարածութեամբ քարաժայռ, որի վրայ, ըստ աւանդութեան, Վախիթանդ Գորգառլան բերդ էր կառուցել, որ վերջին արարական յարձակման ժամանակ կործանուած էր: Աշոտ Բագրատունի վերականգնեց այս բերդը քարաժայռի վրայ, հիմնեց նրա առջեւ, մինչեւ Արտանուշի գետակի ափը, նոր աւան, Արտանուշ կոչումով, եւ իր բնակութիւնը հաստատեց այնտեղ: Նա շրջապատեց քաղաքը հսկայ պարիսպով, իսկ քարաժայռի վրայ տաճար կանգնեց յանուն Պետրոս եւ Պողոս առաքեալների եւ իր համար զամբան պատրաստեց այնտեղ⁷:

Բագրատունեաց այս ճիւղի իշխանութիւնն Արտանուշում տեւել է մինչեւ ԺԱ. դար: Մարկուարտ գերմանացի հայագէտն, որ յատկապէս Վրաստանի Բագրատունեաց տոհմին շատ կարեւոր մի քննական ուսումնասիրութիւն է նուիրած, հետեւեալ տոհմանաւորութիւն է նուիրած, սկսելով Հայաստանի Աշոտ Պատրիկից⁸.

⁷ Сборникъ Матеріаловъ для описанія мѣстностей и племень Кавказа. Тифлисъ 1900 вынукъ 28. (Կովկասի ցեղերի եւ բնակավայրերի տեղագրական ժողովածոյ: Պաշտօնական հրատարակութիւն Կովկասի [ուսումնական] Ուսումնարանական Հոգաբարձութեան: Տիֆլիս 1900, հատոր 28.)
⁸ Մարկուարտ (Marquart), «Վրական Բագրատունեաց ծագումը: Թարգմ. Հ. Մարտիկ. Հայագրական: Վիեննա, Միլիթարեան Տպ., 1913:

Աշոտ Պատրիկ Հայաստանի († 761)
Վասակ

Ատրնեբէս Ա. (Ազամնասէ ըստ Վրաց)

1. Աշոտ Բագրատունի, Կիւրապաղատ († 874)
2. Բագրատ Ա. Կիւրապաղատ († 876)
3. Դաւիթ Ա. Կիւրապաղատ († 881)
4. Ազամնասէ Բ. «Իշխան Վրաց» († 890)
5. Դաւիթ Բ.
6. Ազամնասէ Գ.
7. Աշոտ Բ. Կիւրապաղատ († 954)
8. Սմբատ «Մամփալ»⁹ († 958)
9. Բագրատ Բ. († 994)
10. Դաւիթ Գ. Մեծ, Կիւրապաղատ († 1001)

Ըստ այսմ Արտանուշի Բագրատունեաց կամ վրացի Բագրատիոնիներ Նախահայրն է եղած Վասակ՝ Աշոտ Բ. Պատրիկի որդին: Այս Վասակը յայտնի է Հայոց Պատմութեան մէջ իբրեւ մին այն հայ հրամանատարներից, որոնք մասնակցել են Արճէշի պատերազմին ընդդէմ արաբացուց (775): Այս անհաւասար պայքարով մղուած ճակատամարտն անյաջող է եղած Հայոց համար: Պատերազմի արդիւնքի հետեւանքով Վասակ Բագրատունի տեղափոխուել է Տայքն այնտեղ հաստատուել:

Ինչպէս ճիշդ նկատել է Մարկուարտ Արտանուշի Աշոտ Բագրատունին եւ իր յաջորդները, մերթ Բիւզանդիոնի եւ մերթ արաբացուց գերիշխանութեան ներքոյ էին, բայց չէին կորել իրենց յարաբերութիւնները Հայաստանի Բագրատունիների հետ: «Իբրեւ սլաւոնական աւատաւորները, ասում է Մարկուարտ, Հայաստանի իրենց ցեղակցաց քաղաքականութեան կը հետեւէին...»:

Աշոտ Կիւրապաղատ սպանուել է գաւառանութեամբ, հաւանականաբար մինչդրէլներից: Նա թաղուել է Արտանուշի քարաժայռում, իր պատրաստած հանգստարանում:

Աշոտի որդիքը՝ Ազամնասէ (Ատրնեբէս ըստ Հայոց), Բագրատ եւ Գուարամ, զեւ փոքր էին երբ Աշոտ վախճանուեց: Արարացիներն օգտուելով նրա մահից, նորից գրաւեցին Արտանուշն եւ Շալչէթը: Բայց Աշոտի որդիքը քիչ յետոյ իշխանութեան գլուխ անցնելով կռիւր վերսկսան արարացիների

⁹ Այս տիտղոսը Արտանուշի Բագրատունիներից չափերն են կրել. մամփալ վրացերէն նշանակում թագաւոր, «մէփէ» բառից ծագելով, բայց ունի նաեւ Բռնակալի (despote) իմաստ:

հանդատանան եւ իր որդին Բագրատն իր ծաղման համապատասխան զիրք ստանայ»:

Այսպէս է գրում Վրաց Պատմութիւնն, իսկ Բիւզանդականը պատմում է թէ Թագուհին պատուիրակութիւն է ուղարկում ընծաներով Ռոմանոս կայսեր, 1032ին, որ նորոգել է Բիւզանդիոնի հետ Ափխազեայի դաշինքն եւ միեւնոյն ժամանակ կայսեր եղբոր ազգական Ելէնային կնութեան է ուղել Բագրատի համար: Հայագրի կայսրը Մարիամի բոլոր խնդիրքներին գոհացում տալուց զատ, Բագրատին էլ կիւրապազատութիւն է շնորհել: Մարիամի Կ. Պոլսից դարձին, Բագրատ Տայքում էր, ուր եւ նա պտակում է Ելէնայի հետ եւ թաղադրում¹⁷:

Բագրատ Դ. իր աթոռատեղին հաստատում է Արտանուշում, որ «Վրաստանի եւ Ափխազեայի բանալին էր եւ Կովկասի ու Հաստատանի առեւտրական մեծ կենտրոնը: Բացի կիւրապազատութիւնից ունեցել է նաեւ Nobilissime եւ «Մէվաստ» տիտղոսները¹⁸»:

Այս Բագրատը, Չորրորդ, մեծ ջանք է դրած դրած, որ Վրաստանում արաբական տիրապետութիւնից հետք չմնայ: Նա է, որ միացած Տայքի, Ափխազեայի եւ Վրաստանի վրայ թագաւորել է 45 տարի (1027—1072):

Բագրատ Դ.ին յաջորդում է իր որդին Գէորգ Բ., «բարի, աղքատասէր եւ վեհանձն», որ յաջողել է գրաւել իր կողմը վրացի իշխաններին:

Գէորգի իշխանութեան ժամանակ Վրաստան նորից ենթարկւում է մահմետականների արշաւանքին: Այս անգամ սելջուկներն էին յարձակողներն, որոնք սոսկալի աւերումներ պատճառեցին: «Վրաստանը, գրում է Վրաց Տարեգիրքը, ցաւալի տեսարան էր ներկայացնում: Եկեղեցիներն աւերակ էին դարձել. երկիրը ծածկուած էր դիակներով. շատ տեղ արեան անձրեւ էր տեղում»: Թիւրքերը գրաւել էին Թիֆլիս մայրաքաղաքն 1088ին, որով Բիւզանդիոնի ազդեցութիւնը գրեթէ բոլորովին ջնջուել էր Վրաստանում:

Այս տխուր վիճակը բարեբախտարար երկար չէ տևում: Վրաստանի դահի վրայ նստում է իբրեւ յաջորդ Գէորգի, սրա որդին մեծանուն Դաւիթ Բ., որին վրացիք «Աղմաշ-

ներելի»=Վերանորոգիչ տիտղոսն են տուած իր բաղմարդիւն եւ յաղթական գործունէութեանը համար: Հազիւ 16 տարեկան էր երբ նա իշխանութիւնը ձեռք առաւ: Կենտրոնական Վրաստանում, Տիֆլիսի գաւառում, ստում է Տարեգիրքը, բնակչութիւն էր մնացել, բացի բերդերից, ուր ապաստանել էին բոլորը, սկսելով ազնաւորներից: Այս վերջիններն հետզհետէ ետ եկան նոր թագաւորի մօտ, որ նրանց շնորհեց իրենց հօրենական կարուածներն եւ այս կերպով իր կողմը գրաւեց նրանց: Թիւրքերի տիրապետութեան տակ էին ոչ միայն Տիֆլիս այլ նաեւ Ռուսթաւաւանն (Կախէթիայում) եւ ամբողջ Սոմխէթին (Վիրասայքը): Դաւիթ ճարպիկութեամբ օգտուում է այն շրջանում թիւրքերի եւ միւս մահմետական կամ թափառական ցեղերի մէջ ծաղած գծաութիւններից եւ կռիւներից: Նա իր բանակն ուժեղացնում է ազնաւորների աջակցութեամբ: Նա սիրաշահում է նաեւ Կովկասեան լեռնականներին եւ սկսում է իր ազատագրական պատերազմը:

Դաւիթ յարձակում է Վրաստանն աւերող եւ նրա այլեւայլ մասերին տիրապետող թշնամիների վրայ եւ անձամբ ղեկավարելով իր բանակն, հետզհետէ արտաքսում է երկրից բոլոր այդ օտար ասպատակողներին: Սակայն սրանք հանդարտ չեն մնում:

Թիւրքերը 1120ին վերագառնում են Վրաստան եւ ճգնում են իրենց կորցրած տեղերը վերստին գրաւելու: Դաւիթ առանց վհատելու, ձմեռ ժամանակ յանկարծակի յարձակում է նրանց վրայ եւ այնպէս ջարդում, որ «ոչ ոք կենդանի չէ մնում լուրը տանելու» ասում է Տարեգիրքը: Հետեւեալ տարին բոլոր թշնամիները, այսինքն արաբները, պարսիկներն եւ թիւրքերը միացած դարձեալ յարձակում են Վրաստանի վրայ իրենց պարտութեան վրէժը լուծելու: Սակայն անպարտելի Դաւիթ ետ է մղում նրանց եւ այս անգամ աղաքում է նաեւ մայրաքաղաքը, Տիֆլիսն, (1122ին) որ 400 տարուց ի վեր օտարների գերիշխանութեան տակ էր գտնուում: Այս մեծ յաջողութիւնից խրախուսուած, նա անցնում է Հայաստան, եւ Անի քաղաքի Հայոց աղերասներին զիջելով, ազատում է հայ մայրաքաղաքը իր բռնակալներից եւ քաղաքի պահպանութիւնը իր ազնաւորներին վստահելով վերագառնում է Վրաստան, հետք բերելով բաղմաթիւ հայ

¹⁷ Brosset, Histoire de Géorgie, 1ère partie, p. 314.
¹⁸ Steven Runciman, «The Emperor Romanus Lecapenus». Cambridge 1929.

զաղթականներ, որոնց տեղաւորում է Տիֆլիսում եւ շրջակայքում¹⁹:

Դաւիթի այս արշաւանքի մանրամասնութիւնները կը տեսնենք, Պատմութեանս՝ Անի քաղաքին յատկացուած Գլխում:

Դաւիթի այս յաղթութիւններին մեծապէս օգնում է Սաշալրաց արշաւանքը Փոքր Ասիայում, Ս. Երկիրն ազատելու նպատակով: Այս միջոցին էր, որ Սաշալիները Փոքր Ասիայից անցնելով ազատում են Երուսաղէմն եւ հաստատում այնտեղ քրիստոնէայ թագաւորութիւն, որի արքաները Բելգիացի էին, ամուսնացած հայ իշխանուհիներին հետ²⁰:

Դաւիթ Բ.՝ վերանորոգիչ կամ «Վերականգնող» է կոչուած ըստ արժանոյն, ոչ միայն իր քաղաքական յաջողութիւնների համար, այլ նաեւ՝ որովհետեւ վերականգնել է Վրաստանի մէջ թշնամիների ձեռքով քանդուած ու աւերուած վանքերը, եկեղեցիներն եւ հասարակական շէնքերը: Բացի դրանից Դաւիթ մեծ հողատարութիւն է ցոյց տուած ժողովրդի եկեղեցական պէտքերին: Վրաստանում, այն դարում, եկեղեցական անկում էր տիրում, որի մասին Վրաց Տարեգիրքը գրում է. «Եկեղեցիները, Աստուծոյ աները աւազակների որջ էին դարձել. անարժան անձեր եպիսկոպոսական աթոռներ էին դրաւել, իբրեւ տանիքից ներս սպրդող աւազակներ...: Քահանաներն ամէն տեսակ ապօրինի գործեր էին կատարում, նոյն իսկ սճիւրներ...»:

Իրաց այս ցաւալի վիճակին դարման տանելու համար Դաւիթ եկեղեցական ժողով է գումարել «կաթողիկոսներից, արքեպիսկոպոսներից, կրօնաւորներից, վարդապետներից եւ զիտնականներից բաղկացած», որոնք

¹⁹ Համբաւուոր հայասէր Նանէն, որ Ազգաց Միութեան յանձնարարութեամբ Հայաստան էր գնացել, Վրաստանից անցնելու ժամանակ խօսում է այնտեղ բնակող Հայոց մասին եւս: Յատկապէս միւրում է այս Դաւիթ վերանորոգիչին, հետեւեալ պարագայում. «Գորի քաղաքի (Տիֆլիսի մօտ) բնակիչները մեծ մասամբ հայ են, ասում է նաեւ շարունակում է այսպէս. «Ils descendent, dit-on de ceux, qui au XIIe siècle furent amenés dans le pays par le roi géorgien D a vide le Restaurateur. Ils parlent maintenant le géorgien, mais ils ont avec leur ténacité arménienne maintenu leur religion grégorienne», Paris 1928, f. 67.
²⁰ Մանրամասնութիւններ տես «Բելգիա եւ Հայերը», Վիեննա, Միլիթ. Տպ., 1937, էջ 35—76:

միջոցներ են որոշել այս տխուր կացութիւնը դարմանելու եւ հողաւորականութեան վարձն ու զիրքը բարձրացնելու համար:

Դաւիթ ընդհանրապէս մեծ համակիր էր Հայոց: Բայց իբրեւ քաղաքագէտ նա դիտէր սիրաշահել նաեւ իր թշնամի տարրերը: Նրա այս մեծ յատկութիւնը գովեստով յիշատակուած է արարացի պատմիչների կողմից եւս: Էլ-Այնի (1460ին) գրում է նրա մասին. «Դաւիթ արքան իր որդու, Դիմիտրի հետ մտնում էր Թիֆլիսի գլխաւոր մզկիթը, լսում էր թագաւորի մասին կատարուած աղօթքն եւ Կուրանի ընթերցումը: Նա դրամ էր բաշխում Սաթիւրին (քարոզչին) եւ մուշկչիներին: Նա քարաւանսէրայներ էր կառուցանում օտար եկեղեցիների համար, բնակարաններ քարոզիչների համար: Սուֆիներին եւ բանաստեղծներին թոշակներ էր յատկացնում...»:

Դաւիթ հետաքրքրուել էր զրազուել է նաեւ Կուրանով: Մուհամմէդ-էլ-Համէկի (1233ին) գրում է նրա մասին. «Ջուրգերի (վրացիների) թագաւորը մեծ հմտութիւն ունէր մահմետական կրօնի վրայ. շատ անգամ կաղի էր հետ վիճում էր թէ Կուրանը յօրինուած է մարդոց ձեռքով թէ երկնային է ու յաւիտենական²¹»:

Այս մեծարժան Դաւիթ վերականգնող, միայն 53 տարեկան էր երբ վախճանեցաւ: Այնչափ թանկ էր եւ նուիրական նրա յիշատակն, որ Վրաց եկեղեցին եւ ժողովուրդը սրբութեան պատիւ են շնորհած եւ տօնում են նրա յիշատակը Յունուար 26ին:

Մինայի (Երուսաղէմի) վրացական վանքի մէջ կայ, կամ գոնէ 1845ին կար, ինչպէս վկայում է ահանատես Պորֆիրից Ուսպէնսկի ուս վարդապետը Ս. Գէորգի «Իկօնի» (սուրբի պատկեր) առջեւ գրուած՝ Դաւիթ վերականգնողի պատկերը, եւ նրա անունը գրուած էր յունարէն ΠΑΓΚΡΑΤΟΝΙΑΝ = Բագրատունիան հայերէն ձեւով²²: Ըստ աւանդութեան Դաւիթ Բ. է այդ վանքը կառուցել:

²¹ Brosset, Histoire de Géorgie. Additions, p. 237.
²² Христианскій Востокъ. СПб. 1912, էջ 62—64: (Յօդուածի վերնագիրն է [առեւելի] «Վրացի արքայ Դաւիթ վերականգնողի [կամ Շիւսաբի] պատկերը Մինայի վանքի Ս. Գէորգի պատկերի վրայ»):

Դաւիթի կինը, թագուհին հայուհի էր, որից ծնուած որդին Դեմետրի է նրան յաջորդել: Բայց սա մօտ 30 տարի թագաւորելուց յետոյ, դահից հրաժարուած է եւ վանականութիւն է ընդունում: Նրան յաջորդում է իր որդին Դաւիթ Գ. որ կարճատեւ կեանք է ունենում եւ ապա թագաւորում է Գէորգ Գ. (1156—1184), որ, ինչպէս գրում է Վրաց Տարեգիրքը, «թագը ղնելուն պէս իր բազուկը ղինեց քրիստոնէութեան թշնամիներէ դէմ»: Սրա ժամանակ, Տայքի գաւառը նորից լցուել է բնակիչներով եւ վրացիք թուրքերին վանելով հասել են մինչեւ Կարին:

Վրաստան իր փառքի եւ մեծութեան գագաթնակէտին է հասել համբաւուր թաւար թագուհու ժամանակ, որ յաջորդել էր իր հօր, Գէորգ Գ.ին: Թամար (1184—1212) դեռ իր հօր կենդանութեան ժամանակ սկսել է իշխել իրրեւ գահակից: Վրաստանի այս ամենամեծ թագուհու առաջին գործն է եղել մի մեծ եկեղեցական ժողով գումարել, որին հրամայել է միջոցներ որոնել «Վրաստանի կրօնական ասպարէզում ցանուած վատ սերմերն արմատախիլ անելու եւ առհասարակ ժողովրդի բարբերք բարեկարգելու նպատակով»: Իր թագաւորութեան առաջին տարիները թագուհին ստիպուած է եղել մի քանի ըմբոս իշխաններին ի կարգ հրաւիրել: Եւ նա շատ սրամիտ միջոցի է գիտել: Նա երկու կիւ պատգամաւորուհի է ուղարկել նրանց մօտ, որոնք լիովին յաջողում են իրենց վստահուած գերում եւ համոզում են ապստամբներին խոնարհիլ թագուհու իշխանութեան առջեւ: Ապստամբները զալիս են եւ Թամարի ոտքն են ընկնում իրրեւ հնազանդութեան նշան:

«Թամարի պետութիւնը, գրում է Տարեգիրքը, աճում էր եւ ծաղկում օրէցօր: Վախն ու սարսափը տիրում էր մահմետական սուլթաններին...: Նրանց արինգներն այլ եւս չէին հնչում, ուր որ քրիստոնէաների գործիքներն միշտ աւելի եւ աւելի լաւ ձայն էին հանում...»:

«Արքունի դանձը, շարունակում է Տարեգիրքը, լցուեց ոսկիով եւ ոսկի ամաններով: Պալատում այլ եւս արծաթէ աման չէին գործածում այլ միայն ոսկեայ եւ յարձապակեայ՝ հնդկական ազամաններով զարդարում»:

Որպէս զի բանակն անդործութեան մէջ մնալով չմեղկանայ, Թամարին խորհուրդ են տալիս արշաւանք կազմակերպել դէպ ի նօրասան, Պարսկաստանի մեծ նահանգը, «ուր ոչ մի վրացի դեռ ոտք չէր կոխել»: Թագուհին ընդունում է այս առաջարկը, եւ գործողով է անում: Արշաւանքը սկսում է թափրելի 23 (Դավրէժ) գրաւում եւ ապա շարունակում է մինչեւ Պարսկաստանի խորքերը: Այս արշաւանքն այնքան մեծ յաջողութեամբ է պսակուել, որ ըստ Վրաց Տարեգրքի, պարսիկ աւագանին մեծ ընծաներ բերելով թագուհուն հնազանդութիւն են յատնել...: Վերջին կոխն, որ Թամարի ժամանակ տեղի է ունեցել մեծ յաջողութեամբ, Կովկասեան լեռնականներէ ճնշումն է եղած:

Բաղաբական գործերից դուրս, այս յաղթական թագուհու ամենասխրեկի զրազմունքն որսորդութիւնն է եղել եւ ամենահաճելի որսը՝ փասեան, որ հազուադէպ չէր Վրաստանի արեւմտեան մասում: Արդէն այս փասեան բառն էլ (faisan) վրացական աղբիւրից է համարում, որովհետեւ ըստ աւանդութեան, Վրաստանի Փասիս (Phasis) գետի անունից է փոխ առնուած: Այս վրացական փասեանի համբաւը ծանօթ է եղել նոյն իսկ օտար յայտնի ճանապարհորդներին ինչպէս օր. համար համբաւուր Մարկո Պոլօյին որ գրում է (1275ին) «Վրաստանումն են ծնում աշխարհիս ամենաընտիր փասեան թռչունները»:

Թամար՝ առաջին անգամ ամուսնացել էր մի ուսու իշխանի, Գէորգ Բօզոլիւբակոյի հետ, որ իր հօրեղբոր՝ Վսեփոլոգի հալածանքից ազատուելու համար փախել էր իր հայրենիքից եւ ապստան գտել թաթար ղաչաղների (ուսու. ПОЛОВЦЫ) խանի մօտ 24: Այս ամուսնութիւնը կատարուել է մի հայ վաճառականի թելադրութեամբ: Ահա ինչպէս է նկարագրում այս դէպքը վրացի պատմաբան Սախանով: «Թիֆլիսի հայ հարուստ վաճառականներից մէկն, որ մեծ ճանապարհորդութիւններ էր կատարում Վրաստանից դուրս, օտար երկիրներում, առեւտրական

23 Վրացերէն բնագրում գրուած է հայկական ձեւով — Դավրէժ:
24 Сѣверный Архивъ, 1925, էջ IV. յօդուած ակադեմիկոս Բօզոլիւբակի՝ «Ռուս իշխանների ամուսնութիւնը վրացուհիների հետ ժ. գ. դարում»:

գործերով, խորհուրդ է տուել, որ Թամար թագուհին որ նոր էր գահէ վրայ բազմել, ամուսնանայ մի երիտասարդ ուսու իշխանի հետ որ այն ժամանակ պոլովեան (ПОЛОВЦЫ) կոչուած թաթարների խանի մօտ էր գտնուում: Այս իշխանը Անդրէ Բօզոլիւբակոյ իշխանի որդին Գէորգն էր: Թագուհին ընդունեց այս թելադրութիւնն եւ ամուսնացաւ: Բայց շատ չանցած Թագուհու եւ նրա ամուսնու մէջ թիւրիմացութիւն ծագելով ուսու իշխանը թողեց հեռացաւ 25: Այս «թիւրիմացութիւնն» հաւանականաբար այն է, որ ամուսնութիւնն աւուր էր մնացել եւ թագուհին ու ժողովուրդը գահաժառանգ էին ուզում...:

Բօզոլիւբակոյից բաժանուելուց վերջը Թամար 1193ին երկրորդ ամուսնութիւն կնքեց իշխան Դաւիթ Սոալանի հետ, որ մօր կողմից Բագրատունեաց զարմին էր պատկանում: Այս ամուսնութիւնն արդիւնաւոր է եղած թագուհին ունեցել է մի որդի՝ Գէորգ-Լաշա եւ մի աղջիկ՝ Ռուսուդան:

Թամար այնքան սիրելի էր իր ժողովրդին, որ երբ նա ծանր հիւանդացել է վրացիք մեծից մինչեւ փոքրը, աղօթել են եւ ասել ըստ Տարեգրքի, «մեռնիմ բալորս միայն քէ Թամար ողջ մնայ»: Նրա մահուան ճիշդ թուականը քննութեան առարկայ է դեռ: Brosset համարում է 1212 Յունուար 18-բայց վրացի ուսումնական Սարգիս Կակաբաձէ՝ հայկական աղբիւրներէ եւ Թամարի ու իր որդի Գէորգ Լալայի օրով կոխուած վրացական դրամներէ վրայ հիմնուելով որոշում է 1210 Յունուար 27ին 26:

Վրաց Տարեգրքում այս, մեծ թագուհու վրացերէն կենսագրականի մէջ, բազմաթիւ հայերէն բառեր են գործածուած (հարկաւ վրացերէն գրերով) ինչպէս ուղղափառ, բօք, դառնաբօք, որ առիթ է տալիս գաղղիացի մեծ պատմիչ Բրօսէին կարակացնելու թէ՛ կա՛մ այն է, որ այն դարում (ժ.գ.) հայերէնը յաճախակի գործածութեան մէջ էր վրացական գրականութեան մէջ եւ կա՛մ պատմիչն ինքը հայազգի էր:

25 Khakhanoff, Journal Asiatique, Paris 1898, Mars-Avril. «La Situation des Arméniens en Géorgie».
26 Կակաբաձէի կարգացած գեկուցումը Տիգրանում, 1912ին:

Թամարի ամուսինը Դաւիթ Սոալանի մեռել էր Թագուհուց 3 տարի յտակ:

Թամարին յաջորդել է կարճ ժամանակով իր որդին Գէորգ-Լալա եւ ապա աղջիկը՝ Ռուսուդան, որ աւելի երկարատեւ իշխանութիւն է վարել (1123—1247):

Շարունակութիւնը կը տեսնենք Պատմութեան ընթացքում:

(Շարունակելի:)

ՍԱՐՈՒԽԱՆ

ԵՂԻԱ Մ. ՏՆՏԵՍԵԱՆ — Շարական ձայնագրեալ: Խրատուար 1934, գրատուարան եւ գրաշարատուն Յակոբ Մերուխան: Մեծադիր 32 X 23, էջ ԺԳ + 776:

Երեք տարիներու արնաջան ու անխոնջ աշխատութեան արդիւնք է Ե. Մ. Տնտեսանի այս շարակնոցը, սրբագրուած երաժշտական յանձնաժողովէ մը եւ ուսումնասիրողին հարիւրամեակին առթիւ հրատարակուած իր որդիէն՝ Լեւոն Ե. Տնտեսանէ:

Տպագրութիւնն է մաքուր եւ հայկական ձայնագրութեամբ, որուն ընթերցումը դիւրացնելու համար անչուշտ գրուած է հրատարակութեան սկիզբը համեմատական տախտակ մը հայկական եւ եւրոպական ձայնագրութեան:

Հետեւելով եկեղեցական տօներու կարգին՝ շարակնոցը կը սկսի Ծննդեան եւ Աստուածայայտնութեան ճրագալոյցի շարականներէն, որոնց կը յաջորդեն Սուրբերու առ հասարակ, եւ առանձինն Հայաստանեաց Եկեղեցւոյ տօնած Սուրբերու յատուկ շարականները: Գործին վերջն աւելցուած են արեւադալի ժամերգութեան երգերը, Ջրօրհնէքի քարոզը եւ տաղերը «Ով դարմանալի» եւ «Այսօր ձայնն հայրական», Տեսնենդատաղը տաղը «Բրիստոս փառաց թագաւոր», Ռոնուայի քարոզը «Աստուած մեծ» եւ գանձը՝ «Այս խորհուրդ»:

Համեմատելով Տնտեսան շարակնոցի կղանակները 1875ին Վաղարշապատ տպուած մեծ շարակնոցի եւ 1930ին Պոլիս հայկական